

բոյն շրջաբերականների մէջ առաջարկում է արքեպիսկոպոսներին, որ սորա իրենց հօտին համոզեն ո. Գահի կամքին միանդամայն հնազանդելու: Եկեղեցի կօնդրեգացիան, բացի այդ, յիշում է և 1900 թ. հրատարակուած մի ուրիշ կարգադրութիւն, որով սլաւոն ժամասացութիւնը թոյլ է տրւում միայն այն համայնքների մէջ, որտեղ նա գերելնող է եղել վերջին 30 տարիների ընթացքում: Ընդհանրապէս Գալմացիայում և սլաւոն-կաթոլիկ ուրիշ երկրներում այն կարծիքն է տիրում, որ նոր սլաւը մաադիր է սլաւոնական ժամասացութիւնը բոլորովին դադարեցնել:

ԲՈՂՈՒԲԼԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

Մօտերո լոյս տեսած Սահսին—Վէյմարի դքսութեան սինօդի եկեղեցական հաշիւը լի է եկեղեցական կեանքի անպայման անկման դառն դանդառներով: Եկեղեցի յաճախելը օրըստօրէ ընկնում է: Սօցիալ—դեմոկրատիական քարոզչութիւնը, որ նոյն իսկ դիւղերի մէջ մուտք է գտել, ժողովրդի մեծ մասի մէջ կրթել է անտարբերութիւն դէպի եկեղեցին և կրօնը: Ուսանողութեան եկեղեցական կեանքը, որից կազմակերպւում է բարձր դասակարգը—հաւասար է զերօյի—նորա այլ ևս ոչ մի հետաքրքրութիւն դէպի եկեղեցին ցոյց չեն տալիս: Կառավարչական շրջաններումն էլ կրօնական անտարբերութիւնը մեծ է, և այս նախատինքը պատկանում է նաև եկեղեցւոյ հովիւներին: Բազմաթիւ եկեղեցական ընդերու թիւններ և ժողովներ, ինչպէս օրինակ վերջերս կազմուած Սահսինիայի դքսութեան սօցեալ—աւետարանական ժողովը, նախագծել են կրօնը պաշտպանելու համար մի շարք միջոցներ, սակայն դժբա հաւատք գիտական տեսակէտից պաշտպանելու և մասնաւոր գաշնակցութիւններ կազմակերպելու ընաւորութիւնն ունին:

ՌՈՒՍԸՑ ԵԿԵՂԵՅԻ

Ռուսաց լեզուի հալածումն Աւստրո-Վենգրիայում: Ռուսաց լեզուն հալածուած է Աւստրո-Վենգրիայում այն ժամանակ, երբ Ռուսաց կայսրութեան թէ բարձր և թէ ոտորին կրթական հաստատութիւնների մէջ դերմաներէնը ընդունուած է իբրև դասական առարկայ և ոչ ոք չէ մտածում որևէ տեղ այդ լեզուի դէմ արգելք դնել: Լիւրլեան քաղաքում ասլորում և հասա-